

*Перевод с русского на армянский язык осуществлен  
ГНКО «Центр переводов министерства юстиции Республики Армения»  
«7» сентября 2020 года*

*Ռուսերենից հայերեն թարգմանությունն իրականացվել է Հայաստանի  
Հանրապետության արդարադատության նախարարության  
«Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից  
7 սեպտեմբերի 2020 թվականի*



**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

10 հուլիսի 2020 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝ հետևյալ կազմով՝

նախագահող՝ դատարանի նախագահ Ժ.Ն. Բաիշեւ,

զեկուցող դատավոր՝ Կ.Լ. Չայկա,

դատավորներ՝ Ա.Մ. Աժիբբաիմովա, Է.Վ. Հայրիյան, Դ.Գ. Կոլոս,  
Տ.Ն. Նեշատաեւա, Վ.Խ. Սեյտիմովա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Է. Թումանյան,  
Ա.Ա. Ֆեդորցով,

դատական նիստի քարտուղար՝ Ն.Ս. Չեչենեւա,

ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 14-րդ, 19-րդ, 72-րդ, 75-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է հետևյալ խորհրդատվական եզրակացությունը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի, «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 16 հավելված հանդիսացող՝ «Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման մասին» արձանագրության 62-րդ կետի, «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 17 հավելված հանդիսացող՝ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 3-րդ եւ 15-րդ կետերի պարզաբանման մասին Ռուսաստանի Դաշնության՝ ի դեմս Արդարադատության նախարարության դիմումի հիման վրա:

## **I. Դիմողի հարցը**

Ռուսաստանի Դաշնությունը՝ ի դեմս Արդարադատության նախարարության (այսուհետ՝ դիմող), «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 67-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի, Պայմանագրի թիվ 16 հավելված հանդիսացող՝ «Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման մասին» արձանագրության (այսուհետ՝ «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրություն) 62-րդ կետի, Պայմանագրի թիվ 17 հավելված հանդիսացող՝ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության (այսուհետ՝ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրություն) 3-րդ եւ 15-րդ կետերի պարզաբանման մասին դիմում է ներկայացրել Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան):

Դիմողը ենթադրում է, որ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մեջ առկա է անորոշություն՝ բանկեր չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացվող ֆինանսական լիզինգը «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 3-րդ կետի իմաստով ֆինանսական ծառայությունների շարքին դասելու հարցում եւ դրա վրա պրոդենցիալ միջոցների տարածման իրավաչափության առումով:

Արդարադատության նախարարության դիմումը հիմնված է Միության իրավունքի հետեւյալ նորմերի վրա:

Պայմանագրի XVI՝ «Ֆինանսական շուկաների կարգավորում» բաժնի նպատակներին հասնելու համար ընդունված՝ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 3-րդ կետի 2-րդ «գ» ենթակետով նախատեսված է, որ ֆինանսական ծառայությունների շարքին են դասվում բանկային ծառայությունները, որոնց թվում ներառված է ֆինանսական լիզինգը:

Ելնելով Պայմանագրի 65-րդ հոդվածի 3-րդ կետից՝ ֆինանսական ծառայությունների համար, որոնց վրա տարածվում է Պայմանագրի XVI բաժինը, առաջին հերթին գործում են դրա դրույթները, մինչդեռ XV՝ «Ծառայությունների առևտուր, հիմնադրում, գործունեություն եւ ներդրումների իրականացում» բաժնի նորմերը կիրառվում են ֆինանսական շուկաների իրավական կարգավորմանը չհակասող մասով:

Անդամ պետություններում ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման իրավական հիմքերը սահմանվում են «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրությամբ: Ի կատարումն տվյալ արձանագրության 40-րդ կետի՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 110 որոշմամբ հաստատվել է ծառայությունների ոլորտների (ենթաօլորտների) ցանկը, որոնցում գործում է Միության շրջանակներում միասնական շուկան (այսուհետ՝ Միության շրջանակներում ծառայությունների ոլորտների միասնական ցանկ): Տվյալ ցանկում ներառված են առանձին տեսակի լիզինգային ծառայություններ, որոնց մի մասի համար Պայմանագրի XVI բաժնով նախատեսված ֆինանսական

ծառայությունները դրանց թվից հանելու մասին վերապահում է արվել: Դիմողի կարծիքով՝ լիզինգային ծառայությունները, որոնց մասով Միության շրջանակներում ծառայությունների ոլորտների միասնական ցանկում չկա դրույթ ֆինանսական ծառայությունները դրանց թվից հանելու մասին, օրինակ՝ ոչ բանկային կազմակերպությունների լիզինգային ծառայությունները, «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության գործողության ոլորտի մեջ են մտնում: Արդարադատության նախարարությունը, հղում անելով «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 62-րդ կետին, նշում է, որ նմանատիպ իրավական կարգավորումն անդամ պետությունների վրա պարտավորություն է դնում ոչ բանկային կազմակերպությունների կողմից սրամադրվող լիզինգային ծառայությունների համար չկիրառել թույլտվության պահանջներ եւ ընթացակարգեր, որոնցով զրոյացվում կամ կրճատվում են օգուտները եւ կարող են հնարավոր արգելքներ ստեղծվել շուկա մուտքի համար:

Դիմողը նշում է, որ ի տարբերություն «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրությամբ նախատեսված՝ ծառայությունների մատուցման ընդհանուր իրավական ռեժիմի՝ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 15-րդ եւ 19-րդ կետերն անդամ պետություններին հնարավորություն են տալիս որակավորման պահանջների եւ ընթացակարգերի, տեխնիկական ստանդարտների ու լիցենզավորման պահանջների շարքին դասվող միջոցներ ձեռնարկելու միջոցով իրականացնել պրուդենցիալ կարգավորում:

Լիզինգային գործունեության մասով պրուդենցիալ միջոցների անհրաժեշտությունն Արդարադատության նախարարությունը բացատրում է մակրո- եւ միկրոտնտեսական գործոններով, ինչպես նաեւ լիզինգի պայմանագրեր կնքելիս լիզինգատուների անբարեխիղճ վարքագծի դեպքում ֆիզիկական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի իրավունքների պաշտպանության նպատակներով: Դիմողը, հիմնավորելով տվյալ դիրքորոշումը, դիմում է մյուս անդամ պետությունների փորձին եւ նշում, որ Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրության մեջ ամրագրված են կենտրոնական բանկերի լիազորությունները լիզինգային գործունեության ոլորտում, նույնանման

փոփոխություններ պլանավորվում է կատարել Ղրղզստանի Հանրապետության օրենքներում:

Արդարադատության նախարարությունը, սահմանելով ֆինանսական լիզինգի տնտեսական բնույթը, հղում անելով միջազգային պայմանագրային պրակտիկային, ֆինանսական վիճակագրության միջազգային ստանդարտներին, միջազգային կազմակերպությունների մոտեցումներին եւ Միության անդամ պետությունների օրենսդրությանը, ուշադրությունը կենտրոնացնում է տվյալ ծառայության վարկային (ֆինանսական) բնութագրերի վրա: Նրա կարծիքով՝ ֆինանսական լիզինգը «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության կամ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության կարգավորման առարկա համարելը չի կարող կախվածության մեջ դրվել համապատասխան ծառայությունը մատուցող անձի կարգավիճակից:

Դիմողը, ենթադրելով, որ Պայմանագրի դրույթների փոխկապակցված պարզաբանումը թույլ չի տալիս սահմանել լիզինգային գործունեության կարգավորման նկատմամբ Միության իրավունքի մոտեցումը, Դատարանին խնդրում է պարզաբանել՝

- արդյոք բանկ չհանդիսացող լիզինգային ընկերության կողմից մատուցվող լիզինգային ծառայությունները «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության կարգավորման առարկա են, թե դրանք կարգավորվում են «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության դրույթներով.

- արդյոք Պայմանագրին համապատասխանում է լիզինգային գործունեության պրուդենցիալ կարգավորման ներմուծումը Միության անդամ պետության կողմից, այդ թվում մասնավորապես՝ սեփական միջոցների (կապիտալի) նվազագույն չափին ներկայացվող պահանջների սահմանումը, ֆինանսական նորմատիվների եւ հաշվետվողականության սահմանումը.

- արդյոք լիզինգային գործունեության պրուդենցիալ կարգավորում սահմանելիս Միության անդամ պետությունն իրավունք ունի սահմանելու լիզինգի պայմանագրեր կնքող կազմակերպությունների՝ ուղղակի հարկերով

(կազմակերպությունների շահութահարկերով եւ գույքահարկերով) հարկման առանձնահատկությունները:

## II. Եզրահանգումները

Մեծ կոլեգիան, իրականացնելով Միության իրավունքի պարզաբանում, Պայմանագրի թիվ 2 հավելված հանդիսացող՝ Դատարանի ստատուտի 50-րդ կետին համապատասխան, ղեկավարվում է «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թվականի մայիսի 23-ի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) նորմերով, մասնավորապես՝ տվյալ կոնվենցիայի 31-րդ հոդվածով, համաձայն որի՝ միջազգային պայմանագիրը մեկնաբանվում է բարեխիղճորեն՝ այն սովորական նշանակությանը համապատասխան, որը պայմանագրի եզրույթները պետք է ստանան իրենց համատեքստում՝ հաշվի առնելով դրա նախաբանը եւ հավելվածները, ինչպես նաեւ պայմանագրի առարկայի եւ նպատակների լույսի ներքո: Համատեքստի հետ մեկտեղ հաշվի է առնվում, այդ թվում՝ մասնակիցների միջեւ ցանկացած հետագա համաձայնություն պայմանագրի դրույթների կիրառման վերաբերյալ, դրա կիրառման պրակտիկան եւ միջազգային իրավունքի համապատասխան նորմերը, որոնք կիրառվում են մասնակիցների միջեւ հարաբերություններում:

1. Պայմանագրի 65-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ XV բաժնի նպատակն է Միության շրջանակներում ծառայությունների առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման ազատության ապահովումը՝ սույն բաժնի եւ «Ծառայությունների առեւտրի մասին» արձանագրության պայմաններին համապատասխան:

Անդամ պետություններում ծառայությունների առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման կարգավորման իրավական հիմքերը սահմանվում են «Ծառայությունների առեւտրի մասին» արձանագրությամբ:

XV բաժնի դրույթները, Պայմանագրի 65-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, կիրառվում են անդամ պետությունների այն միջոցների նկատմամբ, որոնք առնչվում են ծառայությունների տրամադրմանն ու ստացմանը, հիմնադրմանը, գործունեությանը եւ ներդրումների իրականացմանը:

Բացառություն են կազմում պետական (մունիցիպալ) գնումները, որոնք կարգավորվում են Պայմանագրի XXII բաժնով, ինչպես նաեւ տրամադրվող ծառայությունները եւ պետական իշխանության գործառույթների կատարման համար իրականացվող գործունեությունը:

Պայմանագրի 65-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված է, որ սույն Պայմանագրի XVI, XIX, XX եւ XXI բաժիններում ներառված ծառայությունները կարգավորվում են համապատասխանաբար այդ բաժինների դրույթներով: XV բաժնի դրույթները գործում են Պայմանագրի նշված բաժիններին չհակասող մասով:

Տվյալ իրավական նորմից հետեւում է, որ XV բաժնով սահմանվում է ընդհանուր կարգավորում ծառայությունների բոլոր տեսակների (ոլորտների) համար այն դեպքում, երբ Պայմանագրի XVI, XIX, XX եւ XXI բաժիններով հատուկ կարգավորում է սահմանվում այնպիսի ծառայությունների համար, ինչպիսիք են՝ ֆինանսական (XVI բաժին), բնական մենաշնորհների (XIX բաժին), էներգետիկայի (XX բաժին), տրանսպորտային (XXI բաժին) ծառայությունները: Սա նշանակում է, որ *lex specialis derogat generali* (հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրը) իրավական սկզբունքին համապատասխան՝ ընդհանուր եւ հատուկ կարգավորումների միջեւ հակասությունների առկայության դեպքում կիրառվում են հատուկ նորմերով սահմանված կանոնները: Այն հարաբերությունների նկատմամբ, որոնց վրա հատուկ կարգավորումը չի տարածվում, կիրառվում են ընդհանուր նորմեր:

Պայմանագրի 66-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերին համապատասխան՝ ծառայությունների առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման ազատության ապահովման նպատակներով՝ անդամ պետությունները կատարում են ծառայությունների փոխադարձ առեւտրի,

հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման պայմանների փուլային ազատականացում, ինչպես նաեւ ձգտում են ստեղծել «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 38-43-րդ կետերով նախատեսված՝ ծառայությունների միասնական շուկան եւ ապահովել դրա գործունեությունն առավելագույն թվով ծառայությունների ոլորտներում:

Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման ազատականացումը, Պայմանագրի 67-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, իրականացվում է միջազգային սկզբունքներն ու ստանդարտները հաշվի առնելով՝ անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման եւ անդամ պետությունների իրավասու մարմինների փոխադարձ վարչական համագործակցության կազմակերպման միջոցով:

Սկզբունքներից մեկը, որով անդամ պետությունները ղեկավարվում են ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման ազատականացման գործընթացում, Պայմանագրի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան, հետետողականության սկզբունքն է, այսինքն՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման մասով ցանկացած միջոցի ձեռնարկում, այդ թվում՝ անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցում եւ վարչական համագործակցություն՝ հիմք ընդունելով հետեւյալը՝

- ծառայությունների ոչ մի ոլորտում եւ գործունեության ոչ մի տեսակի դեպքում չի թույլատրվում փոխադարձ հասանելիության պայմանների վատթարացում՝ սույն Պայմանագրի ստորագրման ամսաթվի դրությամբ գործող պայմանների եւ սույն Պայմանագրով ամրագրված պայմանների հետ համեմատած,

- Բարձրագույն խորհրդի կողմից հաստատված, «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 2-րդ կետի 4-րդ պարբերությունում եւ 15-17-րդ, 23-րդ, 26-րդ, 28-րդ, 31-րդ, 33-րդ եւ 35-րդ կետերում նշված՝ սահմանափակումների, առգրավումների, լրացուցիչ պահանջների ու պայմանների անհատական ազգային



ցանկերով նախատեսված սահմանափակումների, առգրավումների, լրացուցիչ պահանջների ու պայմանների փուլային կրճատում:

Հետեւաբար՝ անդամ պետություններն իրենց վրա են վերցրել հետեւյալ պայմանների համեմատ փոխադարձ հասանելիության պայմանները չվատթարացնելու պարտավորությունները՝

ա) Պայմանագիրն ստորագրելու օրվա դրությամբ համապատասխան անդամ պետությունում առկա պայմանների,

բ) անմիջապես պայմանագրով ամրագրված պայմանների:

Բացի այդ՝ Պայմանագրի 66-րդ հոդվածի 1-ին կետով անդամ պետությունները սահմանել են, որ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող ռեժիմի հետ համեմատ՝ մյուս անդամ պետությունների անձանց ծառայությունների առելտրի, հիմնադրման եւ գործունեության մասով նոր խտրական միջոցներ չեն ներմուծի:

Դրա հետ մեկտեղ՝ Պայմանագրի 65-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված է, որ XV բաժնի դրույթները չեն խոչընդոտում անդամ պետությանը ձեռնարկելու կամ կիրառելու այնպիսի միջոցներ, որոնք՝

1) անհրաժեշտ են հասարակության բարոյականության կամ հասարակական կարգի պահպանության համար: Հասարակական կարգի նկատառումներով՝ բացառությունները կարող են կիրառվել միայն, եթե հասարակության արմատական շահերի դեմ ուղղված իրական եւ բավականին լուրջ վտանգ է ստեղծվում.

2) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար.

3) անհրաժեշտ են անդամ պետությունների՝ սույն բաժնի դրույթներին չհակասող օրենսդրության պահպանման համար՝ ներառյալ այն միջոցները, որոնք վերաբերում են՝

մոլորության մեջ գցող եւ անբարեխիղճ գործելակերպի կամ քաղաքացիաիրավական պայմանագրերը չկատարելու հետեւանքների կանխարգելմանը,

առանձին անձանց մասնավոր կյանքին միջամտելուց պաշտպանությանը անձնական բնույթի տեղեկություններ մշակելիս ու տարածելիս եւ անձնական կյանքի ու հաշիվների մասին տեղեկությունների գաղտնիության պաշտպանությանը,

անվտանգությանը.

4) անհամատեղելի են «Ծառայությունների առեստրի մասին» արձանագրության 21-րդ եւ 24-րդ կետերի հետ՝ պայմանով, որ փաստացի տրամադրվող ռեժիմի տարբերությունը պայմանավորված է ուղղակի հարկերով արդար կամ արդյունավետ հարկումը եւ ծառայությունների առեստրի, հիմնադրման, գործունեության մասով այլ անդամ պետության կամ երրորդ պետությունների անձանցից դրանց գանձումն ապահովելու ձգտումով, եւ այդպիսի միջոցները չպետք է հակասեն անդամ պետությունների միջազգային պայմանագրերի դրույթներին.

5) անհամատեղելի են «Ծառայությունների առեստրի մասին» արձանագրության 27-րդ եւ 29-րդ կետերի հետ՝ պայմանով, որ ռեժիմի մասով տարբերությունը հարկման, այդ թվում՝ կրկնակի հարկումից խուսափելու հարցերին առնչվող այն համաձայնագրի արդյունքն է, որի մասնակիցն է համապատասխան անդամ պետությունը:

Ընդ որում՝ Պայմանագրի 65-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված է, որ վերը թվարկված միջոցների ձեռնարկումը չպետք է հանգեցնի անդամ պետությունների միջեւ կամայական կամ չարդարացված խտրականության կամ ծառայությունների առեստրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման գործում քողարկված սահմանափակումների:

«Ծառայությունների առեստրի մասին» արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ դրա դրույթները, ինչպես եւ Պայմանագրի XV բաժնի դրույթները,

կիրառվում են անդամ պետությունների կողմից իրականացվող ցանկացած միջոցի նկատմամբ, որն առնչվում է ծառայությունների տրամադրմանն ու ստացմանը, հիմնադրմանը, գործունեությանը եւ ներդրումների իրականացմանը:

«Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 7-րդ կետին համապատասխան՝ ծառայությունները որոշվում եւ դասակարգվում են Հիմնական մթերքի միջազգային դասակարգչի հիման վրա, որը հաստատվել է Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարության վիճակագրական հանձնաժողովի կողմից (Central Products Classification, այսուհետ՝ CPC):

Բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 110 որոշմամբ հաստատվել է Միության շրջանակներում ծառայությունների ոլորտների միասնական ցանկը: Այդ ցանկում ներառված են՝

- առանց օպերատորի՝ շինարարական մեքենաների եւ սարքավորումների լիզինգի կամ վարձակալության ոլորտում ծառայություններ, որոնք մատուցվում են շինարարական աշխատանքների շրջանակներում (CPC 5480) (Միության շրջանակներում ծառայությունների ոլորտների միասնական ցանկի 5-րդ կետի 24-րդ ենթակետ).

- առանց օպերատորի՝ մեքենաների եւ սարքավորումների լիզինգի ու վարձակալության ոլորտում ծառայություններ (CPC 73112, 73114, 73121-73123) (Միության շրջանակներում ծառայությունների ոլորտների միասնական ցանկի 24-րդ կետ)՝

1) բեռնափոխադրման համար նախատեսված՝ առանց վարորդի ավտոտրանսպորտային միջոցների,

2) բեռնափոխադրման համար նախատեսված մոտոցիկլների, անիվների վրա տների եւ բնակելի ավտոկցորդների,

3) ուղեւորատար տրանսպորտային միջոցների,

4) կախովի սարքավորումներով գյուղատնտեսական տրակտորների, ցանիչների, տնկիչների, հնձիչների, խոտհնձիչների եւ սորտավորող մեքենաների,

5) շինարարական եւ հողային աշխատանքների համար տրակտորների, ճանապարհային գրեյդերների, շոգեգլոնների, բուլդոզերների, էքսկավատորների, շերեփավոր ճակատային բեռնիչների, չհավաքվող փայտամածների, շինարարական վագոնիկների,

6) բոլոր տեսակների գրասենյակային տեխնիկական միջոցների եւ սարքավորումների, գրասենյակային կահույքի, անկիզելի պահարանների.

- անձնական օգտագործման առարկաների վարձակալություն՝ ազատ ժամանակն անցկացնելու համար օգտագործվող բոլոր տեսակների կենցաղային ապարատուրայի լիզինգի ծառայությունների մասով (CPC 73210) (Միության շրջանակներում ծառայությունների ոլորտների միասնական ցանկի 25-րդ կետ).

- առանց օպերատորի (անձնակազմի)՝ զբոսանավերի վարձակալության եւ լիզինգի ծառայություններ՝ բացառությամբ Պայմանագրի XVI բաժնով նախատեսված ֆինանսական ծառայությունների (Միության շրջանակներում ծառայությունների ոլորտների միասնական ցանկի 47-րդ կետ):

Մեծ կոլեգիան պնդում է, որ վերոնշյալ եւ Բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 110 որոշման մեջ հիշատակված ծառայությունների ոլորտներից (ենթաոլորտներից), որոնցում գործում է միասնական շուկան, ոչ մեկը ֆինանսական լիզինգի եւ ֆինանսական ծառայությունների շարքին չի դասվում: CPC-ում ֆինանսական լիզինգն առանձնացված է որպես 7-րդ մասի (ֆինանսական եւ հարակից ծառայություններ, անշարժ գույքի հետ կապված ծառայություններ, լիզինգային եւ վարձակալական ծառայություններ) 71-րդ բաժնի (ֆինանսական եւ հարակից ծառայություններ) 711 խմբի (ֆինանսական ծառայություններ՝ բանկերի ներդրումային ծառայություններից, ապահովագրության եւ կենսաթոշակային ապահովման ծառայություններից բացի) 71140 ենթադաս: Սրա հետ մեկտեղ՝ CPC-ի 7-րդ մասում կա 73-րդ բաժին (առանց օպերատորի լիզինգի եւ վարձակալության ծառայություններ), որում, 7-րդ մասի կառուցվածքի համաձայն, ներառված են ֆինանսական եւ հարակից ծառայություններ չհանդիսացող լիզինգային եւ վարձակալական ծառայությունները: CPC-ի պարզաբանումներում նշված է, որ

71140 ենթադասում ներառված չեն 73-րդ բաժնի գործառնական լիզինգի ծառայությունները:

Հաշվի առնելով շարադրվածը՝ Մեծ կոլեգիան արձանագրում է, որ ֆինանսական լիզինգի ծառայությունները չեն մտնում Բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 110 որոշմամբ հաստատված՝ Միության շրջանակներում ծառայությունների ոլորտների միասնական ցանկի մեջ, որոնցում գործում է միասնական շուկան, դրա մեջ մտնում են այլ տեսակի ծառայություններ, որոնք ընդհանուր առմամբ կարգավորվում են XV բաժնի եւ «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության դրույթներով:

«Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 1-ին կետի համաձայն՝ սույն Արձանագրությունը մշակվել է Պայմանագրի 70-րդ հոդվածին համապատասխան եւ կիրառվում է անդամ պետությունների կողմից իրականացվող՝ ֆինանսական ծառայությունների առևտրին, ինչպես նաեւ ֆինանսական ծառայություններ տրամադրողների հիմնադրմանը եւ (կամ) գործունեությանն առնչվող միջոցների նկատմամբ:

Ընդ որում, «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 3-րդ կետով «ֆինանսական ծառայություններ» հասկացությունը սահմանված է որպես ֆինանսական բնույթի ծառայություններ, որոնք ներառում են բանկային ծառայությունները: Պայմանագրով ֆինանսական լիզինգը համարվում է բանկային ծառայություն եւ մտնում է ֆինանսական ծառայությունների հասկացության մեջ:

Այսպիսով, այնպիսի ֆինանսական ծառայության տրամադրման գործունեությունը, ինչպիսին ֆինանսական լիզինգն է, կարգավորվում է Պայմանագրի XVI բաժնի եւ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության դրույթներով: Պայմանագրի XV բաժնի եւ «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության դրույթները ֆինանսական լիզինգի նկատմամբ կիրառելի են XVI բաժնին եւ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության դրույթներին չհակասող մասով:

2. Արդարադատության նախարարության երկրորդ հարցի առնչությամբ Մեծ կոլեգիան նշում է, որ դիմողը խնդրում է պարզաբանել՝ արդյոք Միության

անդամ պետության կողմից լիզինգային գործունեության պրոդենցիալ կարգավորում ներմուծելը՝ ներառյալ, մասնավորապես, սեփական միջոցների (կապիտալի) նվազագույն չափի նկատմամբ պահանջներ սահմանելը, ֆինանսական նորմատիվներ եւ հաշվետվողականություն սահմանելը, համապատասխանում է Պայմանագրին:

Պրոդենցիալ (կանխող, հնարավոր ռիսկերին ուղղված) կարգավորումը կազմակերպությունների գործունեությանը ներկայացվող՝ տնտեսապես հիմնավորված պահանջների ամրագրման իրավական ձեւ է՝ դրանց ֆինանսական կայունությունը բարձրացնելու եւ ոչ իրացվելիության ու անվճարունակության ռիսկերը նվազեցնելու նպատակներով:

Մասնավորապես, սեփական միջոցների (կապիտալի) նվազագույն չափի նկատմամբ պահանջներ սահմանելը, ֆինանսական նորմատիվներ եւ հաշվետվողականություն սահմանելը, որոնք ներառվում են պրոդենցիալ կարգավորման մեջ, դիմողի հարցի համաձայն, Պայմանագրի, այլ միջազգային պայմանագրերի նորմերի իմաստով խոչընդոտներ, սահմանափակումներ, թույլտվության պահանջներ եւ ընթացակարգեր, արգելքներ կամ խտրական միջոցներ չեն, որոնցով ուղղակիորեն կամ անուղղակիորեն զրոյացվում, կամ կրճատվում են լիզինգատուների օգուտները:

Ֆինանսական նորմատիվները կազմակերպության ֆինանսական ռեսուրսների ձեւավորումը, բաշխումը եւ վերաբաշխումը կարգավորող նվազագույն, միջին կամ առավելագույն սահմանային մեծություններն արտացոլող ցուցանիշներ են:

Հաշվետվողականություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության պարբերաբար կատարվող հանրագումարը, որը ներառում է որոշակի ցուցանիշների, անցած ժամանակահատվածում ստացված եկամուտների եւ կատարված ծախսերի ամբողջությունը, իսկ սեփական միջոցների (կապիտալի) նվազագույն չափը՝ սեփական միջոցների բավարարության նորմատիվի թվային արժեքը:

Տվյալ ֆինանսական գործիքների առկայությունը ներհատուկ է ցանկացած տեսակի տնտեսավարող գործունեության եւ, a priori, ֆինանսների եւ նյութադրամական միջոցների շարժի ոլորտում կազմակերպությունների գործունեության պետական կարգավորման անբաժանելի եւ համընդհանուր տարր է:

Մեծ կոլեգիան արձանագրում է, որ պրուդենցիալ կարգավորման ինստիտուտը կախված չէ լիզինգային գործունեություն իրականացնող անձանց սուբյեկտային կազմից եւ դրա տեսակներից:

Բացառապես լիզինգատու վարկային կազմակերպությունների համար այդպիսի կարգավորում սահմանելը անխուսափելիորեն կհանգեցնի ոչ միայն սվյալ տնտեսավարող սուբյեկտների իրավունքների եւ օրինական շահերի խախտման այլ կատեգորիայի՝ լիզինգատուների համեմատ, որոնց նկատմամբ պրուդենցիալ կարգավորում չի կիրառվում, այլ նաեւ լիզինգատուների՝ նկատի առնելով նրանց համար չարդարացված ռիսկերի էական աճը:

Հետեւելով փոխկապակցված նորմերի համատեքստում Պայմանագրի նշված դրույթների դատական պարզաբանման նպատակներին՝ Մեծ կոլեգիան համարում է, որ Պայմանագրի 66-րդ հոդվածի 1-ին կետի, «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 21-րդ, 24-րդ, 61-րդ եւ 62-րդ կետերի դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից անկախ հետեւյալ հիմնավորումներով Միության անդամ պետությունների կողմից լիզինգային գործունեության պրուդենցիալ կարգավորում սահմանելու հարցում հակասություններ եւ արգելքներ չկան:

Պայմանագրի 66-րդ հոդվածի 1-ին կետին համաձայն՝ «անդամ պետությունները մյուս անդամ պետությունների անձանց ծառայությունների առևտրի, հիմնադրման եւ գործունեության մասով չեն ներմուծի նոր խտրական միջոցներ՝ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ գործող ռեժիմի հետ համեմատ»:

Լիզինգային գործունեության նկատմամբ պրուդենցիալ միջոցների կիրառումը նույնը չէ, ինչ մյուս անդամ պետությունների ծառայությունների

առեւտրի, հիմնադրման եւ գործունեության մասով խտրական միջոցների ներմուծումը, այլ ընդհակառակը՝ հանգեցնում է ոչ բանկային լիզինգային կազմակերպությունների կայունության եւ դրանց նկատմամբ վստահության պահպանման: Տվյալ եզրահանգումը հարաբերակցվում է «Ծառայությունների առեւտրի մասին» արձանագրության 57-րդ կետի այն նորմի հետ, որ յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության վրա ազդող՝ այդ անդամ պետության բոլոր միջոցները կիրառվեն ողջամիտ, օբյեկտիվ եւ անկողմնակալ կերպով:

Հաշվի առնելով, որ պրուդենցիալ կարգավորումը խտրական միջոցների հետ փոխկապակցված չէ, դրա ներմուծումը Միության անդամ պետություններում Պայմանագրի 66-րդ հոդվածի 1-ին կետին չի հակասում:

Ընդ որում, Մեծ կոլեգիան արձանագրում է, որ «Ծառայությունների առեւտրի մասին» արձանագրության 61-րդ եւ 62-րդ կետերի դրույթներում սահմանվում են, որ՝

«61. Հանձնաժողովը, համաձայնեցնելով անդամ պետությունների հետ, մշակում է Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող կանոններ՝ ապահովելու համար, որ ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության ժամանակ թույլտվության պահանջներն ու ընթացակարգերը չստեղծեն չհիմնավորված խոչընդոտներ: Այդ կանոնների նպատակն ապահովելն է, որ թույլտվական այդ պահանջներն ու ընթացակարգերը, ի թիվս այլնի՝

1) հիմնված լինեն օբյեկտիվ եւ հրապարակային այնպիսի չափորոշիչների վրա, ինչպիսիք ծառայությունների առեւտուրն ու գործունեությունն իրականացնելու ձեռնահասությունը եւ ունակությունն են,

2) չլինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է՝ իրականացվող գործունեության անվտանգությունը, ինչպես նաեւ տրամադրվող ծառայության անվտանգությունն ու որակն ապահովելու համար,

3) չսահմանափակեն ծառայությունների առեւտուրը, հիմնադրումը եւ (կամ) գործունեությունը»:



«62. Անդամ պետությունները չեն կիրառում թույլտվության այնպիսի պահանջներ եւ ընթացակարգեր, որոնցով գրոյացվում կամ կրճատվում է օգուտը եւ որոնք՝

1) չեն համապատասխանում սույն Արձանագրության 61-րդ կետում նշված չափորոշիչներին,

2) պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ սահմանված չեն եղել անդամ պետության օրենսդրությամբ եւ չեն կիրառվել համապատասխան անդամ պետության կողմից»:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 24 որոշմամբ հաստատված, «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 61-րդ կետը զարգացնելու համար մշակված՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման եւ գործունեության կարգավորման կանոնները փոխկապակցված չեն լիզինգային գործունեության պրուդենցիալ կարգավորման հարցերի հետ: Որպես հետեւանք՝ Միության անդամ պետության կողմից պրուդենցիալ կարգավորման ներմուծումը չի հակասում տվյալ կարգադրությանը եւ համարվում է ազգային իրավագործություն:

Կանոնների 3-րդ կետի հինգերորդ պարբերությանը համապատասխան՝ «չարդարացված խոչընդոտները (սահմանափակումները)» պարտադիր պահանջներ եւ (կամ) ընթացակարգեր են, որոնք հանգեցնում են ավելի նշանակալի տնտեսական ծախքերի, քան անհրաժեշտ է կարգավորման նպատակներին, այդ թվում՝ տրամադրվող ծառայությունների անվտանգության ու որակի, իրականացվող գործունեության եւ (կամ) գործողությունների անվտանգության ապահովման նպատակներին հասնելու համար՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական հետեւանքները եւ համապատասխան կարգավորումն իրականացնող անդամ պետության բյուջետային համակարգի բյուջեների համար հետեւանքները:

«Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 62-րդ կետում «թույլտվության պահանջներ եւ ընթացակարգեր» եզրույթի իմաստային

բովանդակությունը բխում է տվյալ արձանագրության 6-րդ կետի 16-րդ եւ 17-րդ ենթակետերի նորմերից եւ ցույց է տալիս, որ այն նույնը չէ, ինչ պրոդենցիալ կարգավորման հասկացությունը:

Թույլտվության ընթացակարգեր են համարվում բոլոր այն ընթացակարգերը, որոնք իրավասու մարմինների կողմից իրագործվում են անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, կապված են թույլտվությունների եւ դրանց կրկնօրինակների տրամադրման եւ վերաձեւակերպման, թույլտվությունների դադարեցման, կասեցման եւ վերականգնման կամ գործողության ժամկետի երկարաձգման, դրանցից զրկման (չեղարկման), թույլտվությունների տրամադրման մերժման, ինչպես նաեւ այդպիսի հարցերով բողոքների ուսումնասիրման հետ:

Թույլտվության պահանջներ են համարվում դիմողին, թույլտվության տիրապետողին եւ (կամ) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան տրամադրվող ծառայությանը, իրականացվող գործունեությանը ներկայացվող բոլոր այն ստանդարտները եւ (կամ) պահանջները (այդ թվում՝ լիցենզավորման, որակավորման), որոնք ուղղված են անդամ պետության օրենսդրությամբ սահմանված՝ կարգավորման նպատակներին հասնելն ապահովելուն:

Մեծ կոլեգիան համարում է, որ «պրոդենցիալ կարգավորում» եզրույթի իրավաբանական կառուցվածքի պարզաբանումն անհրաժեշտ է՝ ձեւավորելու համար եզրահանգումն առ այն, թե արդյոք կարգավորման տվյալ տեսակը «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 62-րդ կետի իմաստով թույլտվության ընթացակարգերի եւ թույլտվության պահանջների համար իրավական անալոզն է:

Նպատակային նշանակությամբ եւ բովանդակությամբ թույլտվության ընթացակարգերն ու թույլտվության պահանջներն ունեն իրավական կարգավորման այլ՝ պրոդենցիալ կարգավորման ինստիտուտի առարկայից տարբերվող ինքնուրույն առարկա:

«Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 19-րդ կետում եւ Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի՝ Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքներում թվարկված՝ պրուդենցիալ կարգավորման միջոցները նույնական չեն թույլտվության ընթացակարգերի եւ թույլտվության պահանջների՝ «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 15-րդ եւ 16-րդ ենթակետերի սահմանումների հետ:

Մեծ կոլեգիան գտնում է, որ լիզինգային կազմակերպությունների պրուդենցիալ կարգավորման ինստիտուտի եւ «Ծառայությունների առևտրի մասին» արձանագրության 62-րդ կետի նորմի միջեւ հակասություն չկա:

3. Մեծ կոլեգիան, պատասխանելով լիզինգային գործունեության պրուդենցիալ կարգավորում ներմուծելիս ուղղակի հարկերով հարկման առանձնահատկություններ նախատեսելու անդամ պետության իրավունքի մասին դիմողի հարցին, հանգում է հետևյալ եզրակացություններին:

Պայմանագրի 3-րդ եւ 5-րդ հոդվածների բովանդակությունը վկայում է, որ Միությունն իր գործունեությունն իրականացնում է Պայմանագրի եւ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերի հիման վրա անդամ պետությունների կողմից իրեն վերապահված իրավասության սահմաններում եւ ծավալներով: Տվյալ իրավական նորմերի իմաստային բովանդակության պարզաբանումը թույլ է տալիս Մեծ կոլեգիային հանգել այն եզրակացության, որ Միությանը չփոխանցված լիազորություններն անդամ պետությունների իրավասությունն են:

Միության իրավունքի վերլուծությունից հետևում է, որ Պայմանագրի 71-73-րդ հոդվածներով եւ Պայմանագրի թիվ 18 հավելված հանդիսացող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի եւ դրանց վճարման նկատմամբ հսկողության մեխանիզմի մասին» արձանագրությամբ սահմանված են անուղղակի հարկերի գանձման սկզբունքներն ու կարգը:

Ծառայությունների առևտրի մասով անդամ պետությունների կողմից ուղղակի հարկում ներմուծելու թույլատրելիությունը՝ ներառյալ այլ անդամ պետության անձանցից համապատասխան հարկերի գանձումը, նախատեսված է Պայմանագրի 65-րդ հոդվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետով:

Պայմանագրով եւ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով ինտեգրացիոն միավորմանն ուղղակի հարկման ոլորտում իրավասություն չի տրվել, ինչը վկայում է անդամ պետությունների օրենսդրությամբ համապատասխան իրավահարաբերությունների կարգավորման մասին: Տվյալ մոտեցմանը համապատասխանում է Դատարանի վերաքննիչ պալատի՝ «Մելադ» ՍՊԸ-ի գործով 2016 թվականի հունիսի 2-ի որոշման մեջ շարադրված դիրքորոշումը, համաձայն որի՝ հարկային իրավահարաբերությունները Միության իրավունքով ազգային իրավագործություն են համարվում (որոշման 7.3 կետի 9-րդ պարբերություն):

Դիմողի հարցի տեսանկյունից տվյալ դիրքորոշման կիրառումը հիմքեր է տալիս այն եզրահանգման համար, համաձայն որի ուղղակի հարկերով հարկման առանձնահատկությունների սահմանումն անդամ պետությունների իրավասությունն է եւ Միության իրավունքի գործողության ոլորտի մեջ չի մտնում:

**4.** Հաշվի առնելով շարադրվածը՝ Մեծ կոլեգիան հիմնավոր է համարում դիմողի հարցերին տալ հետեւյալ պատասխանները:

**4.1.** Բանկ չհանդիսացող լիզինգային ընկերության կողմից մատուցվող լիզինգային ծառայությունները «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության կարգավորման առարկայի մաս են կազմում:

**4.2.** Լիզինգային ընկերությունների կողմից իրականացվող լիզինգային գործունեության պրուդենցիալ կարգավորման ներմուծումը Միության անդամ պետության կողմից՝ ներառյալ սեփական միջոցների (կապիտալի) նվազագույն չափի նկատմամբ պահանջների սահմանումը, ֆինանսական նորմատիվների եւ հաշվետվողականության սահմանումը, համապատասխանում է Պայմանագրին:

4.3. Ուղղակի հարկերով հարկման առանձնահատկությունների սահմանումն անդամ պետությունների իրավասությունն է եւ Միության իրավունքի գործողության ոլորտի մեջ չի մտնում:

### III. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել էլ դիմողին:

Խորհրդատվական եզրակացության տեքստը հրապարակել Դատարանի պաշտոնական ինտերնետ-կայքում:

Նախագահող՝

Ժ.Ն. Բախշեւ

Դատավորներ՝

Ա.Ս. Աժիբրախիմովա

Է.Վ. Հայրիյան

Դ.Գ. Կոլոս

Տ.Ն. Նեշատաեւա

Վ.Խ. Սեյտիմովա

Գ.Ա. Սկրիպկինա

Ա.Է. Թումանյան

Ա. Ա. Ֆեդորցով

Պատճենը ձեռն է՝

Կ.Լ. Չայկա

Դատավոր՝ Կ.Լ. Չայկա

[*կնիք, ստորագրություն*]

15.07.2020